

**«ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ ԱՐԱՄԱՅԻՍԻ

**ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԵՐՅՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

**ՃԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (մայրենի)»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական դեկանավար՝

մանկավարժական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Զովհիետա Հարովյունի Գյուլամիրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր
Վիկտոր Լիպարիտի Կատվայյան

մանկավարժական գիտությունների թեկնածու,
պրոֆեսոր պ/կ Գայանե Լիպարիտի Խալաթյան

Առաջատար կազմակերպություն՝

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026թ. հունվարի 22-ին՝
ժամը 12:00-ին, Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանում գործող << ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական
խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Արովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի դեկտեմբերի 19-ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝



Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԿՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաների արագընթաց զարգացումն ու թափանցումը ժամանակակից հասարակության մեջ լուրջ փոփոխություններ է առաջացրել ինչպես մասնագիտական բոլոր, այնպես էլ տարրական կրթության ոլորտում: Ինչպես գիտության, այնպես էլ բարձրագույն կրթության և հանրակրթության բոլոր աստիճաններում այսօր լայնորեն կիրառվում են SCS միջոցներ և արդիական գործիքակազմեր, որոնք դարձել են ժամանակի հրամայականը: Ակնհայտ է, որ այդ տեխնոլոգիաներն ու գործիքակազմերը մեծապես նպաստում են գիտելիքահեն կրթության զարգացմանը՝ մասնավորաբար որոշակի խնդիրներ առաջացնելով ավանդական կարծրատիպերով օժտված հանրակրթության ոլորտում: Բազում խնդիրների մեջ հատկապես ակնառու է ընթերցանության նկատմամբ ժամանակակից սերնդի աստիճանաբար զարգացող անստարեր վերաբերմունքը, որը բացասաբար է անդրադառնում ոչ միայն նրանց կրթության որակի, այլև անձի զարգացման, համոզմունքների, վարքի, արժեհամակարգի բաղադրիչների ծևավորման և բազմաթիվ այլ ոլորտների վրա: Համակարգչային դարաշրջանը, կարծես, սովորողներից «խիել է» գիրք կարդալու մշակույթը, և արդյունքում՝ նրանք թեև կարողանում են կարդալ, սակայն չունեն ընթերցողական մշակույթը:

Հարգացած հասարակության գերխնդիրը գրագետ, կրթված անհատի ձևավորումն է, որի հիմքում ընկած է նաև ընթերցողական կարողությունը, որի զարգացումն առաջին հերթին ապահովվում է ընթերցողական գործունեության արդյունքում:

Հայտնի բոլոր կրթական համակարգերում ընթերցողական կարողության զարգացման ուղղությամբ իրականացվող գործընթացների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ակնառու տարբերություններ ունենալով հանդերձ՝ ունեն բազում ընդհանրություններ:

ՀՀ տարրական դպրոցի ինչպես նախկին, այնպես էլ մայրենիի նոր առարկայական ծրագրերի հիմնարար պահանջներից է գրքի, ընթերցանության նկատմամբ սովորողների սիրո, հետաքրքրության, հարգանքի դաստիարակությունը, ինչպես նաև անձի կարդալու պահանջմունքի զարգացումն ու բավարարությունը:

Իսկ ինչպես սովորողներին դարձնել ընթերցասեր:

Սովորողների ընթերցողական գործունեության ճիշտ տրամաբանությունը պետք է սկսել զարգացնել առաջին ուսումնական օրվանից, մայրենիի առաջին դասից, այսինքն՝ այբբենարանով աշխատելու ընթացքում: Դեռևս գրաճանաչության շրջանում, երբ սովորողներն սկսում են կարդալ փոքրածավալ նյութեր, պետք է նրանց սովորեցնել ոչ միայն կարդալ՝ պահպանելով կարդալու որակական հատկանիշները, այլև բացահայտել կարդացածի հիմնական միտքը, թափանցել նրա

Ենթաշերտերի մեջ: Ընդ որում՝ շահեկան է այդ գործընթացն իրականացնել «սովորողակենտրոն» մեթոդներով, այսինքն՝ ինքնուրույն գործունեության ճանապարհով ոչ միայն բացահայտելու այն գիտելիքները, որոնք իրենց պետք են, այլև մղելով դրանց շուրջ մտածելու և խոսքի տարրեր տեսակներով մեկնաբանելու:

Անքննելի է, որ տարրական դպրոցը հանրակրթության այն օրակն է, որի ընթացքում սկսում են զարգանալ և ծևավորվել անձի մտավոր կարողությունները, ընդարձակվել են ուսումնական դրդապատճաններն ու ճանաչողական հետաքրքրությունները՝ նպաստելով կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանը: Ի հակադրություն այս ամենի՝ ինչպես նշեցինք, այսօր, ցավոք, նվազել է ընթերցանության նկատմամբ ժամանակակից սերնդի հետաքրքրությունը, որն ունի, անշուշտ, բազմաթիվ հիմնավորումներ, այդ թվում՝ նշված կարողության զարգացմանը նպաստող համարժեք մեթոդների ոչ լիարժեք տիրապետությը, մայրենիի դասանապատճենի և ընթացքի անկատարությունը, ինչպես նաև կրթության այդ փուլի վերջնարդյունքների անտեսումը:

Այսպիսով, ուսումնասիրվող թեմայի արդիականությունը պայմանավորված է ընթերցանության նկատմամբ ժամանակակից կրտսեր դպրոցականների հետաքրքրության նվազմամբ, դրա պատճանների բացահայտմամբ և սովորողների ընթերցողական կարողության զարգացման ուղղությամբ մայրենիի դասերի ընթացքում կիրառվող մեթոդիկայի անկատարությամբ:

Հետազոտության օբյեկտը: Կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման գործընթացն է տարրական դպրոցում:

Հետազոտության առարկան: Կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանը նպաստող մեթոդական համալիրն է:

Հետազոտության նպատակը: Մշակել տարրական դպրոցում իրականացվող մայրենիի դասերի կազմակերպման այնպիսի մեթոդական համակարգ, որը կնպաստի ընթերցողական գործունեության նկատմամբ կրտսեր դպրոցականների հետաքրքրության և պահանջնունքների զարգացմանն ու դրանց բավարարմանը նպաստող ընթերցողական կարողության ձևավորմանը:

Հետազոտության գիտական վարկածը: Կրտսեր դպրոցականների ընթերցողական գործունեության կազմակերպումը կնպաստի ընթերցանության նկատմամբ կրտսեր դպրոցականների սիրո, հետաքրքրության, ընթերցասիրության դաստիարակմանը և ընթերցողական կարողության զարգացմանը, եթե՝

1. մշակվի, փորձարարությամբ հիմնավորվի և ներդրվի կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանը նպաստող մանկավարժութեան հիմնավորված մեթոդական համակարգ,

2. բացահայտվեն, նորովի մեկնաբանվեն ու կիրառվեն կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման գործընթացի վերաբերյալ հայ և օտարազգի մանկավարժների մոտեցումներում ներկայացված,

փորձարկված ու գիտականորեն հիմնավորված սկզբունքները,

3. Կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանը միտված աշխատանքներն իրականացվեն ոչ միայն մայրենիի, այլև հանրակրթության այդ օրակում ուսումնասիրվող այլ առարկաների դասերին, ինչպես նաև նրանց արտադասարանային գործունեության ճանապարհով:

Հետազոտության խնդիրները:

1. Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման վերաբերյալ առկա մանկավարժամեթոդական գրականություն, քննարկել դրանցում ներկայացված սկզբունքային մոտեցումները, մշակել հիմնախնդրի պատմական դրվագը և դիտարկել դրանց արդիականությունը:

2. Ուսումնասիրել **«** տարրական դպրոցում իրականացվող մայրենիի դասագործընթացը կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման տեսանկյունից:

3. Աստենախոսության հիմնախնդրի տեսանկյունից դիտարկել 2023-2024 թվականից **«** տարրական դպրոցում ներդրված մայրենիի առարկայական նոր չափորոշչը, դրա հիման վրա գրված մայրենիի ծրագրերն ու դասագրքերը, համեմատական վերլուծությամբ ներկայացնել քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ դրանցում առկա սկզբունքային մոտեցումները:

4. Բացահայտել ԿԱՊԿ ունեցող կրտսեր դպրոցականների կարդալու և ընթերցողական կարողության զարգացման գործընթացի դժվարությունները, մշակել և փորձարկել դրանց հայթահարմանը միտված մեթոդական հնարներ:

5. Մշակել և փորձարկել կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանը նպաստող մեթոդական համալիր, արդյունքներն ամփոփել և ներդնել տարրական դպրոցում:

Հետազոտության մեթոդները: Առաջադրված խնդիրների լուծման և հետազոտության գիտական վարկածի հաստատման նպատակով կիրառվել են հետևյալ հետազոտական մեթոդները.

✓ աստենախոսության հիմնախնդրին առնչվող մասնագիտական գրականության ուսումնասիրում, դրանցում քննարկվող սկզբունքային հիմնախնդիրների դիտարկում,

✓ **«** տարրական դպրոցի պետական փաստաթղթերի¹ **«** Պետական գործող և նոր կրթական չափորոշչների, դրանց համապատասխան տարրական դասարանների մայրենիի ծրագրերի, մայրենիի դասագրքերի, դրանց մեթոդական ուղեցույցների ուսումնասիրում, մայրենիի պատմական և ժամանակակից մեթոդիկաների վերլուծություն և արդյունքների համակարգում,

✓ հնչպես փորձարարական, այնպես էլ ստուգողական դասարաններում իրականացվող ուսումնական գործընթացի արդյունքների վերլուծության և ընդհանրացման նպատակով դասալումներ **«** հանրակրթական դպրոցների

տարրական դասարաններում, արդյունքների վերլուծություն,

✓ կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության մակարդակների ուսումնասիրում, վերջնարդյունքների բացահայտում և վերլուծություն,

✓ «Մարդուկ-կարդուկ» ծրագրի փորձարկում, ներդնում, արդյունքների վերլուծություն,

✓ հարցախոյզ տարրական դպրոցի ուսուցիչների, աշակերտների և ծնողների շրջանում, արդյունքների վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության գիտական նորույթը:

1. Բացահայտվել են կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման գործընթացի վերաբերյալ գիտական սկզբունքները (լեզվաբանական, հոգեբանական, մանկավարժական, համակարգային, գործնականության, դրդապատճառային և մշակութաբանական):

2. Մշակվել են կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության բնութագրիչները:

3. Հիմնավորվել է, որ կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանը միտված աշխատանքներն իրականացվում են ոչ միայն մայրենի, այլև տարրական դպրոցի ուսումնական պլանով նախատեսված մյուս առարկաների դասերին և արտադասարանային գործունեության ճանապարհով:

Հետազոտության տեսական նշանակությունը: Կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանը նպաստող մեր մշակած մեթոդական համալիրը կիարստացնի հիմնախնդրի վերաբերյալ առկա տեսությունը և կրտանա ՀՀ տարրական դպրոցի համար ստեղծվող ուսումնամեթոդական համալիրների մեթոդաբանության արդյունավետությունը բարձրացնող գործոն:

Հետազոտության գործնական նշանակությունը: Մեր մշակած մեթոդական հնարների համալիրի կիրառման ընթացքում սովորողները ձեռք կրերեն ընթերցողական կարողության տարրական մակարդակ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

- կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ծևավորմանը միտված մեր մշակած և փորձարկած մեթոդները նպաստում են նշված խնդրի լուծմանը,

- Հայաստանի Հանրապետության տարրական դպրոցի մայրենի դասագրքերը նպաստում են կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձևավորմանը,

- մեր մշակած և փորձարկած «Մարդուկ-կարդուկ» մեթոդական համալիրը արդյունավետորեն նպաստում է կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ծևավորմանը,

- կրտսեր դպրոցականների ճանաչողական հետաքրքրությունը նպաստում է նրանց ընթերցողական կարողության ծևավորմանը,

- մեր մշակած ԿԱՊԿ ունեցող սովորողների ընթերցողական կարողության զարգացման գործընթացի հիմնական սկզբունքները և դրանց իրականացման մեթոդական համայիրը նպաստում են նշված սովորողների ընթերցողական կարողության ծևավորմանը:

Հետազոտության փորձաքննությունն ու ներդրումն իրականացրել ենք <ՊՄՀ Ա. Տեր-Գրիգորյանի անվան Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի գիտական սեմինարներում, <ՊՄՀ 100 ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում, Երևանի հմ. 182 ավագ դպրոցում կայացած ուսուցչական աշխատաժողովում, Երևանի հմ. 33, 39 և 162, Գյումրու հմ. 7 և Տավուշի մարզի Նոյեմբերյանի հմ. 2 հիմնական դպրոցների տարրական դասարաններում, ինչպես նաև Երևանի հմ. 39 հիմնական դպրոցում գործող «Մարդուկ-Կարդուկ» ընթերցողական կարողության զարգացման կենտրոնում (<< ԿԳՄՍՆ նախարարի 26.07.2023 թ.-ի № 1222-Ա/2 հրաման):

Աստենախոսության հիմնական դրույթները իրատարակված են 8 գիտական աշխատանքում, որոնցից 5-ը՝ առանց համահեղինակների է:

Աստենախոսության կառուցվածքը և ծավալը: Աստենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, ընդհանուր եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աստենախոսությունը պարունակում է 5 այլուսակ, 37 տրամագիր և 6 հավելված: Աստենախոսության հիմնական տեքստը կազմում է 198 էջ, հավելվածներով՝ 215 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը, օբյեկտը և առարկան, գիտական վարկածը, հետազոտության խնդիրները և մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության բազան:

Աստենախոսության առաջին՝ «Կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության էլությունն ու զարգացման գործընթացի պատմությունը» վերնագրով գլխում քննարկվել են հետևյալ խնդիրները.

- ընթերցողական կարողության էլությունը և բնութագրիչները,
- կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման ուղղությամբ մեթոդական մոտեցումները հայ մանկավարժների ուսումնասիրություններում,

▪ կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման ուղղությամբ մեթոդական մոտեցումները արտասահմանյան մանկավարժների ուսումնասիրություններում:

Վերլուծվել են սովորողների կարդալու ընթացքում առաջացած դժվարությունները և դրանց հաղթահարմանը միտված գործիքակազմերը: Ներկայացվել են կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության հիմնական բնութագրիները: Հիմնավորվել են կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողությունների մակարդակի բարձրացման հիմքում ընկած են առավելապես այն մեթոդները, մեթոդական համակարգերը ու SS միջոցները, որոնք նպաստում են կարդացած ստեղծագործության, ուսումնական նյութի բովանդակության լիարժեք ընկալմանը, գաղափարի բացահայտմանը, ենթատեքստի կոսահմանն ու դիպաշարի տրամաբանության բացահայտմանը: Ներկայացվել են կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման ուղղությամբ մեթոդական ցուցումների վերաբերյալ հայ և արտասահմանյան մանկավարժների դիրքորոշումներն ու սկզբունքները: Նշվել է, որ թեև բոլոր ժամանակներում էլ քննարկվել է սովորողների ընթերցողական կարողության զարգացման հիմնախնդիրը, սակայն յուրաքանչյուր ժամանակաշրջանում այն իր ուրույն դրսերումն է ունեցել և չի բացահայտվել այնպես, ինչպես ժամանակակից գիտնականների և մանկավարժների սերունդն է ընկալում դրա կարևորությունը:

Ասենախոսության երկրորդ՝ «ՀՀ հանրակրթական դպրոցի տարրական դասարանների նախկին և նոր ՀՊՀ-ի հիման վրա ստեղծված մայրենիի ծրագրերի և դասագրքերի հնարավորությունները սովորողների ընթերցողական կարողության զարգացման տեսանկյունից» վերնագրով գլխում դիտարկվել են հետևյալ խնդիրները՝

- «ՀՀ հանրակրթական հիմնական դպրոցի առաջինից չորրորդ դասարաններում մինչև 2024-2025 ուսումնական տարին գործածվող և ՀՊ կրթական չափորոշիչների հիման վրա ստեղծված մայրենիի դասագրքերի դիտարկում ատենախոսության հիմնախնդիրի տեսանկյունից,

- «Պետական կրթական նոր չափորոշիչների և մայրենիի ծրագրի, մայրենիի դասագրքերի դիտարկում ատենախոսության հիմնախնդիրի տեսանկյունից,


- Կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության զարգացման գործընթացի վերաբերյալ տարրական դպրոցի ուսուցիչների կարծիքները:

Այս գլխում ուշադրություն է դարձվել կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման հիմնահարցին, ընթերցողական կարողության ձեռքբերմանն առնչվող բազմամակարդակ խնդիրներին, ներկայացվել են տարրական դպրոցի մայրենիի բոլոր դասագրքերի ուսումնասիրությունների արդյունքները, մայրենիի դասագրքերում սովորողների ընթերցողական կարողության զարգացմանը նպաստող բազմաբնույթ, տարրամակարդակ և զարգացնող առաջարկություններ, ինչպես նաև այն չափանիշները, որոնց հիման վրա ուսումնասիրվել են տարրական դպրոցի մայրենիի դասագրքերը, պարզելու համար՝ թե դրանցում առկա առաջարկանքները որքանով են նպաստում սովորողների

ընթերցողական կարողության զարգացմանն ու ձևավորմանը:

Ներկայացվել են տարրական դասարանների նախկին և նոր ՀՊՀ-ի հիման վրա ստեղծված մայրենի ծրագրերի և դասագրքերի հնարավորությունները սովորողների ընթերցողական կարողության զարգացման տեսանկյունից: 2023-2024 ուսումնական տարվանից գործածության մեջ գտնվող «Մայրենի 2» նոր և մինչև 2023-2024 ուսումնական տարին գործածության մեջ գտնվող «Մայրենի 2» հին դասագրքերի վերլուծությունը ցույց տվեց, որ տրամագրերում բերված միևնույն 6 բաղադրիչները 2-րդ, 3-րդ, 4-րդ դասարանների «Մայրենի 2» հին ու նոր դասագրքերում անհավասարաչափ են բաշխված: Առաջարկվել է սահմանել նույնատիպ սկզբունք, այն է՝ նույնատիպ կառուցվածք, ուսումնական նյութերի նույնաքանակ բաղադրիչներ, մեթոդական կառուցի ընդհանուր մոտեցումներ և այլն:


Ներկայացվել են կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության զարգացման գործընթացի վերաբերյալ տարրական դպրոցի ուսուցիչների շրջանում իրականացված հարցախույզի արդյունքները (տրամագիր 1, 2):



Տրամագիր 1. Սովորողների կարդալու կարողություններն ըստ ուսուցիչների ընտրած պատասխան-տարբերակների

Նշված է, որ հարցախույզին մասնակից ուսուցիչների 35,1 %-ը (տրամագիր 1) «Ընթերցում է՝ կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ», 21,3 %-ը՝ «Կարդալու բոլոր տեսակներով ընթերցումը» պատասխան-տարբերակները: Անշուշտ, կարևոր է, եթե սովորողը կարողանում է ընթերցել կարդալու բոլոր տեսակներով, սա նշանակում է, որ զարգացած է ոչ միայն նրա կարդալու տեխնիկան և բնագրի բովանդակությունը խորությամբ ընկալելու կարողությունը, այլև նա կարողանում է որոշել ստեղծագործության հիմնական միտքը՝ գաղափարը, կրահել ենթատեսատը, կատարել վերլուծություններ, ձևակերպել դատողություններ և այլն:

Ըստ հարցաթերթիկում տրված պատասխան-տարրերակների՝ որպես ընթերցողական կարողության բաղադրիչներ (տրամագիր 2) ուսուցիչները նշել են «կերպարների առանձնացում» (19,5 %) և «կարդացած ստեղծագործության կերպարների համեմատում» (18,2 %) պատասխան-տարրերակները: Նշված է, որ «հենակետային բառերի որոշում» (17,0 %) և «ստեղծագործության ժանրի որոշում» (17,6 %) պատասխան-տարրերակներն ուսուցիչները հավասարապես են գնահատել: Անշուշտ, երկուսն էլ կարևոր բնութագրիչներ են և մեծապես նպաստում են կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանը:



Տրամագիր 2. Սովորողների ընթերցողական կարողությունների բնութագրիչներն ըստ ուսուցիչների ընտրած պատասխան-տարրերակների

Ուսումնասիրությունների ընթացքում կարևորվել է սովորողների ընթերցողական կարողության զարգացման հիմնախնդիրը՝ առաջնային համարելով կարդացած ստեղծագործության դիպաշարի շուրջ իրականացվող վերլուծական-համադրական աշխատանքը: Բացահայտվել է, որ տարրական դպրոցի ուսուցիչների ճնշող մեծամասնությունը թեև կարևորում է սովորողների ընթերցողական կարողությունը, սակայն ոչ բոլորն են պատկերացնում նրա հությունն ու զարգացման գործնականությունը: Նրանց մեծ մասը, թեև պատկերացնում ունի այն մեթոդների մասին, որոնք նպաստում են սովորողների ընթերցողական կարողության զարգացմանը, սակայն ոչ միշտ են դրանք կիրառում տեղին և մեթոդապես ճիշտ:

Ասենախոսության երրորդ՝ «Սովորողների ընթերցողական կարողության զարգացման գործնական տարրական դպրոցում» վերնագրով գլխում դիտարկվել են հետևյալ խնդիրները՝

- բարենպաստ կրթական միջավայրը որպես կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանը նպաստող կարևոր պայման,

- Կրտսեր դպրոցականների ընթերցողական հետաքրքրություններն ու դրանց պայմանավորվածությունը կարդալու կարողության մակարդակով,
- ԿԱՊԿ ունեցող սովորողների ընթերցողական կարողության զարգացման հիմնախնդիրը տարրական դպրոցում (ուսուցիչների կարծիքների քննարկում),
- ԿԱՊԿ ունեցող սովորողների ընթերցողական կարողության զարգացման գործնթացի դժվարությունները և այդ ուղղությամբ ձնողների դիրքորոշումները,
- Կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման ուղղությամբ աշխատանքների դրվածքը տարրական դասարաններում:

«Բարենպաստ կրթական միջավայրը որպես կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանը նպաստող կարևոր պայման» ենթագիլսում ներկայացվել է և վերլուծվել մեր կազմակերպած «Մարդուկ-Կարդուկ» կրթական միջավայրում սովորողների գործունեությունը: «Մարդուկ-Կարդուկ» կենսորոնում ստուգվել են սովորողների կարդալու արագության մակարդակը: Բացահայտվել է, որ չնայած նրանց մի մասը կարդում է սահուն, բայց դժվարանում է հասկանալ, չի ընկալում բնագրի դիպաշարի տրամաբանությունը, հիմնական միտքը (գաղափարը), չի կարողանում համեմատել և հակադրել բնագրի կերպարները: Ուսումնասիրությունների արդյունքների համադրման նպատակով համեմատվել են նախնական՝ հայտորոշիչ հետազոտության և հետազոտության 3 փուլերի տվյալները (այլուսակ հմ.1):

Աղյուսակ հմ.1

Հայտորոշիչ և փուլային հետազոտությունների համեմատական արդյունքները

Սովորող-ներ	Հայտորոշիչ հետազոտություն	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ
		Կարդալու կարողության արագություն, բառ/րոպե		
Մ.Մ.	39	70	77	79
Կ.Ն.	32	51	65	70
Ա.Է.	27	47	66	69
Պ.Ռ.	16	28	41	43
Պ.Ռ.	16	27	40	42
Մ.Ա.	19	28	60	63
Ո.Է.	27	27	47	52
Վ.Է.	26	31	52	56

Առանձնացվել և ներդրվել են կրթական նոր միջավայրում կիրառվող այն փոխներգործուն մեթոդները և խաղային տեխնոլոգիաները, որոնք կրտսեր դպրոցականների շուրջ ստեղծում են կրթական բարենպաստ միջավայր՝ նպաստելով կարդալու նկատմամբ նրանց հետաքրքրության առաջացմանը, ընթերցողական դաշտի ընդարձակմանը, կարդալու և ընթերցողական կարողությունների

զարգացմանը: Բացահայտվել և այս գիտում ներկայացվել են սովորողների ընթերցողական կարողության զարգացման գործնթացում առկա դժվարությունները, ապա մշակվել փորձարկվել ու ներկայացվել են դրանց հայթահարմանը միտված ուղիներ և հնարներ:

Նշվել է, որ «Մարդուկ-կարդուկ» ծրագրի ստեղծման և նրա կիրառման ճանապարհով փորձարարական դասարաններում ձևավորվել է բարենպաստ կրթական միջավայր, նշված ծրագրի սահմաններում կիրառվել են հատուկ մշակված և ընտրված մեթոդիկաներ ու վարժությունների համակարգ, որոնք նպաստեցին կրտսեր դպրոցականների ընթերցողական հետաքրքրությունների զարգացմանը, կարդալու որակի և ընթերցողական կարողության բաղադրիչների մակարդակների բարձրացմանը. այս ճանապարհով բարելավվեց տարրական դպրոցում ուսումնասիրվող բոլոր առարկաների ծրագրային բովանդակության յուրացման գործնթացի արյունավետությունը: Շեշտվում է, որ ուսումնասիրությունների արյունքում կրտսեր դպրոցականներն ընթերցասեր են դառնում միայն որոշակի ծրագրով և մեթոդիկայով, նպատակավաց ու համակարգված աշխատելու դեպքում: Ըստ որում՝ այս գործնթացում չափազանց կարևոր է դպրոց-ընտանիք համագործակցությունը, ծնողների մանկավարժական կրթության, իրազեկվածության ապահովումը:

Կարևորվել է կրտսեր դպրոցականների շրջանում ընթերցանության նկատմամբ վերաբերմունքը՝ նրանք սիրում են ընթերցել, թե՛ ոչ: Տրամադիր 3-ից երևում է, որ (ինչպես և ակնկալվում էր) ընթերցանության նկատմամբ սովորողների հետաքրքրությունը դասարանից դասարան աստիճանաբար աճում է: Այսպես, 2-րդ դասարանցիների 80 %-ը սիրում է զբաղվել ընթերցանությամբ, իսկ 3-րդ դասարանում այդ ցուցանիշը կազմում է 82,3 %, 4-րդ-ում՝ 89,6 %: Հատկանշական է, որ հարցախոսությունների մասնակից 4-րդ դասարանցիների 10,4 %-ը «այլ պատասխան» տողում նշել է, որ «կարդում է շաբաթը մի անգամ», «մի քիչ է սիրում կարդալ» կամ «մի քանի գիրք է կարդացել» և այլն:

Ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելու և այն հաճելի ու ոյսուրին դարձնելու, դրական վերաբերմունք առաջացնելու նպատակով մշակվել և մեր պրակտիկայում իրականացվել է կրտսեր դպրոցականների ընթերցասիրությունը խթանող, դրական դրդապատճառներ ծնող մի քանի հնար.

▪ միջասարանային և ներդասարանային մրցութային ընթերցումներ, որոնք նպաստեցին հետաքրքրաշարժ ճանապարհով կարդալու որակական հատկանիշների պահպանմամբ սովորողների ընթերցողական կարողության զարգացմանը,

▪ գրական վիկտորինաներ՝ բարձրացնելու համար ընթերցած ստեղծագործությունների ընկալունակությունը, զարգացնելու հայթելու, բարձր ցուցանիշներ ձեռքբերելու սովորողների ծգոտումը, որոնք դարձան ստեղծագործություններ ընթերցելուն և վերընթերցելուն միտված անփոխարինելի


խթան,

▪ «Իմ սիրելի գիրքը» խորագրով գովազդի կազմակերպում, որը կազմակերպվեց «Գիրք Նվիրություն» օրը: Սովորողները հետաքրքիր տեղեկություններ հավաքեցին կարդացած ստեղծագործության, նրա հեղինակի մասին և շրջայց կատարելով՝ դասընկերներին պատմեցին օրվա խորհրդի մասին,

▪ ստեղծագործությունների ընթերցում - կարդացած ստեղծագործության նոյն թեմայով կինոնկարի կամ ներկայացման դիտում և քննարկում. սովորողները նախ ընթերցեցին ստեղծագործությունը, ապա նոր դիտեցին համապատասխան կինոնկարը կամ ներկայացումը: Տարբերությունների քննարկումն օգնեց բացահայտելու, որ կարդացած ստեղծագործության բովանդակության ընկալումը տարբերվում է բեմադրիչի կամ դերասանների մեկնաբանություններից,


▪ խաղային տեխնոլոգիաների (վանկային աղյուսակներ, լարիդինֆուզոններ, անագրամներ, գետիվազներ և այլն) կիրառում, որը նպաստեց սովորողների կամածին ուշադրության և հիշողության զարգացմանը, ընթերցողական դաշտի ընդարձակմանը, կարդալու կարողության և ընթերցողական կարողության զարգացմանը,

▪ գրքային միջավայր, որը նպաստում է ընթերցասիրության զարգացմանը: Այն պետք է լինի տպավորիչ, բովանդակալից և հետաքրքիր, որպեսզի սովորողն ունենա «ինձ հաջողվում է, և ես կարող եմ» զգացողությունը:



Տրամագիր 3. Ընթերցանության նկատմամբ կրտսեր դպրոցականների վերաբերմունքը

Թեզի հիմնախնդրի տեսանկյունից դիտարկվել են ԿԱՊԿ ունեցող կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման գործնթացի վերաբերյալ ուսուցիչների մոտեցումներն ու դիրքորոշումները: Տրամադրի 4-ում ներկայացվել է ԿԱՊԿ ունեցող սովորողների ընթերցողական կարողության զարգացմանը նպաստող արդյունքները, մեթոդներն ըստ ուսուցիչների: Ցույց է տրվել, որ ուսուցիչներն առավելապես կարևորում են «խաղային մեթոդ» (1-ին դասարանում՝ 35,7 %-ը, 2-րդ դասարանում՝ 41,2 %-ը, 3-րդ դասարանում՝ 54,2 %-ը, 4-րդ դասարանում՝ 44,0 %-ը), «մրցակցային մեթոդ» (1-ին դասարան՝ 28,6 %), «զրույցի մեթոդ» (2-րդ դասարան՝ 23,5 %) և «քարտային աշխատանք» (3-րդ դասարան՝ 20,8 %) մեթոդական հնարները: Նշվում է, որ ուսուցիչների կարծիքով՝ մայրենիի դասագործընթացում ԿԱՊԿ ունեցող սովորողների ընթերցողական կարողության զարգացման հիմնախնդիրը կլուծվի և որոշ հնարների, մեթոդների և ձևերի կիրառումն ուսուցիչներին թույլ կտա բացահայտելու նրանց ընթերցողական կարողության թույլ և ուժեղ կողմերը, տարաբնույթ հնարներ, մեթոդներ ու տեխնոլոգիաներ մշակելու և փորձարկելու հնարավորություն:



Տրամադրի 4. ԿԱՊԿ ունեցող սովորողների ընթերցողական կարողության զարգացմանը նպաստող մեթոդներն ըստ ուսուցիչների

Այս համատեքստում դիտարկվել են նաև ԿԱՊԿ ունեցող սովորողների ընթերցողական կարողության զարգացման գործընթացի դժվարությունները և այդ ուղղությամբ ծնողների դիրքորոշումները: Ծնողների կարծիքով, ԿԱՊԿ ունեցող 1-4-րդ դասարաններում սովորողների ընթերցողական կարողության զարգացման գործընթացի դժվարությունները հիմնականում կարդալու և գրելու կարողությունների անբավարար մակարդակով է պայմանավորված, որը, բնականաբար, լրջորեն խոչընդոտում է նրանց ընթերցողական կարողության զարգացումը:

Եթշտվում է, որ պայմանավորված ատենախոսության հիմնախնդրով՝ ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից սահմանած <<Պետական նոր չափորոշչային պահանջների համաձայն Երևանի Հովհաննես Բաղրամյանի անվան հմ. 39 հիմնական դպրոցի 2-4-րդ դասարաններում ուսումնասիրություն է իրականացվել սովորողների կարդալու և ընթերցողական կարողությունների մակարդակը ստուգելու նպատակով:

Նշվում է, որ ուսումնասիրությունների առցյունները ցոյց են տախս, որ ԿԱՊԿ ունեցող սովորողների կարդալու կարողության և ընթերցողական կարողության որակը ուսումնասիրվող դասարաններում ցածր է: Նրանք կարդում են դանդաղ, կմկմայով, միաներ են թույլ տախս, դժվարանում են ընթերցել բազմավանկ բառերը, թույլ են տախս անհարկի դադարներ, թերանում են կարդացած ստեղծագործության դիպաշարի ընկալման մեջ: Նրանք բառերի մեջ վանկեր են բաց թողնում, բնագիրը կարդում են ուսուցի ուղղորդմամբ, ոչ արտահայտիչ, չեն ներկայացնում տրամաբանական դադարները, որի պատճառով էլ բնագրի դիպաշարի տրամաբանության, գաղափարի, ենթատեքստի ընկալման անհրաժեշտ մակարդակ չի ապահովվում: Սովորողները հիմնականում դժվարությամբ են ներկայացնում տրամաբանական շեշտերը, թույլ են տախս հայերենի ուղղախոսության խախտումներ, բավարար չափով զարգացած չէ նրանց մի մասի հնչյունային լսողությունը, իսկ ընթերցողական դաշտը հիմնականում սահմանափակ է:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուսումնասիրելով սովորողների ընթերցողական կարողության զարգացման ուղղությամբ հայ և արտասահմանյան մանկավարժների դիրքորոշումներն ու սկզբունքները՝ պարզվել է, որ թեև պատմական տարբեր ժամանակներում մանկավարժներին, մեթոդիստներին, սերնդի կրթության բովանդակության կատարելագործմամբ և պրակտիկայով հետաքրքրվող մասնագետներին մշտապես մտահոգել են սերնդի կարդալու կարողության, ընթերցանության նկատմամբ սիրո, հետաքրքրության և ուսումնական այլ ոլորտներին առնչվող հիմնախնդիրները, մշակվել են, փորձարկվել բազմաբաղադրիչ մեթոդական համալիրներ (նրանցից շատերը կիրառվում են նաև ժամանակակից մեթոդիկայում), սակայն այս հիմնախնդրին գիտականորեն հիմնավոր անդրադարձ է կատարվել միայն վերջին

2-3 տասնամյակում՝ կարևորելով ոչ միայն հիմնախնդրի տեսությունը, այլև տարրական դպրոցում նրա կիրառման պրակտիկան:

2. Կրտսեր դպրոցականների ինչպես կարդալու, այնպես էլ ընթերցողական կարողության մակարդակները կրթության այս օղակում չեն համապատասխանում << տարրական դպրոցի մայրենիի ծրագրով նախատեսված վերջնարդյունքներին: Սովորողները կարդում են դանդաղ, թույլ են տալիս անհարկի դադարներ, ուղղախոսական սխալներ, ոչ միշտ են լիարժեքորեն ըմբռնում կարդացած ստեղծագործության գաղափարը, կրահում ենթատեսատը, հասկանում դիպաշարի տրամարանությունը, նրանց ընթերցողական դաշտը հիմնականում սահմանափակ է և այն: Այնինչ սրանք ընթերցողական կարողության հիմնական բաղադրիչներն են, ավելին՝ այդ կարողության «հիմնայունները»:

3. << տարրական դպրոցի ուսուցիչների ճնշող մեծամասնությունը կարևորել է սովորողների ընթերցողական կարողությունը, սակայն ոչ բոլորն են պատկերացնում նրա էությունն ու ըմբռնում զարգացման գործընթացի սկզբունքները: Մասնավորապես, խոցելի է, որ ուսուցիչների մեծ մասը, թեև պատկերացում ունի այն մեթոդների մասին, որոնք նպաստում են սովորողների ընթերցողական կարողության զարգացմանը, սակայն ոչ միշտ են դրանք կիրառում տեղին և մեթոդապես ճիշտ:

4. <<-ում մինչև 2024-2025 ուսումնական տարին գործածության մեջ գտնվող երկու այբբենարաններում էլ լուծվում էին մայրենիի ծրագրով նախատեսված գործանաչչության գործընթացի խնդիրներն ու վերջնարդյունքները: << Պետական կրթական նոր չափորոշիչների և մայրենիի ծրագրերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ դրանցում տեղ է տրված կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանը: Սակայն կարևորվել է, որ միևնույն դասարանների համար միաժամանակյա գործածվող << Պետական կրթական նոր չափորոշիչների հիմնան վրա գրված մայրենիի դասագրքերի համար անհրաժեշտ է ներկայացնել նոյնատիպ սկզբունքներ՝ սահմանելով նոյնատիպ բաղադրիչներ, ուսումնական նյութերի նկատմամբ որոշակի պահանջներ, մեթոդական կառուցիչ ընդհանուր մոտեցումներ և այլն:

5. ԿԱՊԿ ունեցող սովորողների կարդալու և ուսումնական գործունեություն ծավալելու ունակությունների, մայրենիի դասագործընթացում նրանց ընթերցողական կարողության զարգացման հիմնախնդիրը կարող է լուծվել նաև մեր մշակած հնարների, մեթոդների և ծների կիրառման ճանապարհով: Դրանք ուսուցիչներին կտան տարրական դասարանների ԿԱՊԿ ունեցող սովորողների ընթերցողական կարողության թույլ և ուժեղ կողմերը բացահայտելու, տարաբնույթ հնարներ փորձարկելու, մեթոդներ ու տեխնոլոգիաներ մշակելու և կիրառելու հնարավորություն:

6. «Մարդուկ-կարդուկ» ծրագրի ստեղծման և նրա կիրառման ճանապարհով փորձարարական դասարաններում ծնավորվել է բարենպաստ կրթական միջավայր:

Նշված ծրագրի սահմաններում կիրավել են մեր մշակած և ընտրված մեթոդիկաներն ու վարժությունների համակարգը, որոնք նպաստեցին կրտսեր դպրոցականների ընթերցողական հետաքրքրությունների զարգացմանը, կարդալու որակի, ընթերցողական կարողության բաղադրիչների մակարդակների բարձրացմանը: Պարզվել է, որ կրտսեր դպրոցականներն ընթերցասեր են դառնում միայն որոշակի ծրագրով և մեթոդիկայով նպատակալաց ու համակարգված աշխատելու դեպքում: Ընդ որում այս գործընթացում չափազանց կարևոր է դպրոց ընտանիք համագործակցությունը, ծնողների մանկավարժական կրթության, իրազեկվածության ապահովումը:

Ատենախոսության հիմնական դրույթները իրատարակված են հետևյալ աշխատանքներում՝

1. Գյուղամիրյան Զ., Մելքոնյան Գ. Կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության ձևավորման գործընթացի էությունն ու մանկավարժների դիրքորոշումը // Մանկավարժական միտք., № 3-4 (76-77), Երևան, 2021թ., էջ 81 - 90:

2. Մելքոնյան Գ. Ընթերցողական կարողությունների էությունը և նրա բաղադրիչները // Մանկավարժական միտք., № 3-4 (80-81), Երևան, 2022թ., էջ 121 - 127:

3. Մելքոնյան Գ. Կրտսեր դպրոցականների ընթերցողական հետաքրքրություններն ու դրանց պայմանավորվածությունը կարդալու գործընթացով // Մանկավարժական միտք., № 1-2 (82-83), Երևան, 2023թ., էջ 81 - 91:

4. Գյուղամիրյան Զ., Մելքոնյան Գ. ԿԱՊԿՈՒ աշակերտների ընթերցողական կարողության դժվարությունները և ծնողների դիրքորոշումները // Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, 1 (29), Երևան, 2023թ., էջ 309 - 320:

5. Մելքոնյան Գ. ԿԱՊԿՈՒ աշակերտների ընթերցողական կարողության ձևավորման հիմնախնդիրը տարրական դպրոցում (ուսուցիչների մոտեցումների ըննարկում) // Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, 1 (29), Երևան, 2023թ., էջ 334 - 346:

6. Մելքոնյան Գ. Կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձևավորման մեթոդիկայի պատմությունից // Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու. «Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» գիտաժողով, Երևան, 2023թ., էջ 891 - 899:

7. Գյուղամիրյան Զ., Մելքոնյան Գ. Կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանը նպաստող կրթական միջավայրի դերն ու նշանակությունը // Մանկավարժական միտք., № 1-2 (86-87), Երևան, 2024թ., էջ 13 - 20:

8. Մելքոնյան Գ. << պետական կրթական նոր չափորոշիչների և մայրենիի

ծրագրի, մայորենիի դասագրքերի դիտարկում կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության զարգացման հնարավորությունների տեսանկյունից // Հայագիտական հանդես., № 3 (70), Երևան, 2025թ., էջ 294–309:

МЕЛКОНЯН ГАЯНЕ АРАМАИСОВНА

МЕТОДИКА ФОРМИРОВАНИЯ НАВЫКОВ ЧТЕНИЯ У МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ РОДНОМУ ЯЗЫКУ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 «Методика преподавания и обучение» (родной язык).

Защита диссертации состоится 22 января 2026 года в 12⁰⁰, на заседании специализированного совета 020 «Педагогика» КВОН РА, действующего при Армянском государственном педагогическом университете им. Х. Абояна. Адрес: 0010, г. Ереван, ул. Тигран Мец, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Стремительное развитие и проникновение информационных технологий в современное общество вызвало серьёзные изменения, как в профессиональном, так и в начальном образовании. Компьютерный век как бы «отнял» у учащихся культуру чтения книг, и в результате, хотя они и умеют читать, читательской культуры у них нет. Главная задача развитого общества - формирование грамотной, образованной личности, в основе которой лежит умение читать, развитие которого, прежде всего, обеспечивается в процессе читательской деятельности. В настоящее время интерес современного поколения к чтению снизился, что имеет множество причин, среди которых - отсутствие адекватных методов развития этой способности, несовершенство целей и процесса обучения родному языку, а также пренебрежение конечными результатами данного этапа обучения. Актуальность изучаемой темы обусловлена снижением интереса современных младших школьников к чтению, выявлением его причин, а также несовершенством методики, применяемой на уроках родного языка для развития читательской способности учащихся.

Цель исследования. Разработать такую методическую систему организации уроков родного языка в начальной школе, которая будет способствовать формированию у младших школьников интереса и потребности в читательской деятельности, а также развитию их читательской способности.

Задачи исследования. 1. Изучить существующую педагогико-методическую литературу по проблеме развития читательской способности младших школьников, рассмотреть представленные в ней принципиальные подходы, проанализировать исторический аспект проблемы и оценить их современную актуальность. 2. Исследовать процесс преподавания родного языка в начальной школе Республики Армения с точки зрения развития читательской способности учащихся. 3. Рассмотреть с позиции исследуемой проблемы новый предметный стандарт родного языка, внедренный в начальную школу РА с 2023-2024 учебного года, программы и учебники, разработанные на его основе, провести сравнительный анализ и представить принципиальные подходы, отражённые в них. 4. Выявить трудности процесса чтения и развития читательской способности у младших школьников с ОВЗ, разработать и апробировать методические приёмы, направленные на их преодоление. 5. Разработать и апробировать методический комплекс, способствующий развитию читательской способности младших школьников, обобщить результаты и внедрить их в практику начальной школы.

Научная новизна работы.

1. Выявлены научные основы процесса формирования навыков чтения у младших школьников (лингвистические, психолого-педагогические, системные, практические, мотивационные и культурные).

2. Разработаны характеристики читательской способности младших школьников.

3. Обосновано, что работа по развитию читательской способности младших школьников осуществляется не только на уроках родного языка, но и на занятиях по другим предметам, предусмотренным учебным планом начальной школы, а также во внеурочной деятельности.

Теоретическая значимость исследования. Разработанный нами методический комплекс, способствующий развитию читательской способности младших школьников, обогатит существующую теорию по рассматриваемой проблеме и станет фактором, повышающим эффективность методологии создания учебно-методических комплексов для начальной школы Республики Армения.

Практическая значимость исследования. Благодаря применению разработанного нами комплекса методических приемов учащиеся приобретут элементарный уровень навыков чтения.

Основные положения, выносимые на защиту.

- разработанные и апробированные нами методы, направленные на развитие навыков чтения у младших школьников, способствуют решению вышеупомянутой проблемы;
- учебники по родному языку для начальной школы Республики Армения способствуют развитию читательской способности младших школьников;
- разработанный и апробированный нами методический комплекс «Мардук-Кардук» эффективно способствует развитию навыков чтения у младших школьников;
- познавательный интерес младших школьников способствует развитию их навыков чтения;
- разработанные нами основные принципы процесса развития навыков чтения у учащихся с ограниченными возможностями здоровья (ОВЗ) и методический комплекс для их реализации способствуют развитию навыков чтения у указанных учащихся.

Апробация результатов исследования. Результаты исследования апробированы на научных семинарах кафедры родного языка и методики его преподавания имени А. Тер-Григоряна Армянского государственного педагогического университета, на международной научной конференции, посвящённой 100-летию АГПУ, на педагогическом семинаре в Ереванской средней школе № 182, а также в начальных классах школ № 33, 39 и 162 Еревана, школы № 7 города Гюмри, школы № 2 города Ноемберяна Тавушской области, а также в действующем центре развития читательской способности «Мардук-Кардук» при Ереванской основной школе № 39 (приказ Министра образования, науки, культуры и спорта РА № 1222-А/2 от 26.07.2023 г.).

Основные положения диссертации опубликованы в 8 научных работах, из них 5 без соавторов.

Структура и объем диссертации. Диссертация состоит из введения, трёх глав, общих выводов, списка использованной литературы и приложений. Работа содержит 5 таблиц, 37 диаграмм и 6 приложений. Основной текст диссертации составляет 198 страниц, с приложениями - 215 страниц.

MELKONYAN GAYANE ARAMAYIS

METHODS OF FORMING READING SKILLS IN PRIMARY SCHOOL CHILDREN IN THE PROCESS OF LEARNING THE NATIVE LANGUAGE

Thesis submitted for the degree of Candidate of Pedagogical Sciences, specialty 13.00.02 "Teaching and Education Methodology" (mother tongue).

The defence of the thesis will be held at HESC of RA 020 degree-awarding scientific council's session at Khachatur Abovian Armenian State Pedagogical University on January 22, 2026, at 12:00 pm, Address: 0010 Yerevan, 17 Tigran Mets ave.

SUMMARY

Relevance of the research. The rapid development and penetration of information technologies into modern society has caused serious changes in both professional and in primary education. The computer age seems to have "taken away" the culture of reading books from pupils, and as a result, although they can read, but they do not have a reading culture. The super-task of a developed society is the formation of a literate, educated personality, the basis of which is the ability to read, the development of which is primarily ensured in the process of reading activity. At present, the interest of the modern generation in reading has decreased, which has many reasons, among them the lack of adequate methods for developing this ability, the imperfection of the goals and process of teaching the native language, as well as neglect of the final results of this stage of education. The relevance of the studied topic is due to the decreased interest of modern primary school children in reading, the identification of its causes, as well as the imperfection of the methodology used in native language lessons to develop pupils' reading ability.

Research objective. To develop a methodological system for organizing native language lessons in elementary school that fosters primary school children's interest in and need for reading activities, and contributes to the formation of their reading competence.

Research tasks. 1. To study the existing pedagogical and methodological literature on the development of primary school children's reading competence, analyze the fundamental principles presented therein, trace the historical evolution of the issue, and assess their modern relevance. 2. To study the organization of native language instruction in the elementary schools of the Republic of Armenia from the perspective of developing primary school children's reading competence. 3. From the standpoint of the dissertation's main issue, to analyze the new native language standard introduced in Armenian elementary schools since 2023-2024, along with the programs and textbooks based on it, and through comparative analysis, identify the principal approaches related to the discussed problem. 4. To identify the difficulties faced by primary school children with speech and communication challenges (SCC) in developing reading competence, and to design and test methodological techniques aimed at overcoming them. 5. To design and test a methodological complex that promotes the development of primary school children's reading competence, summarize the results, and implement it in elementary schools.

Scientific novelty of the works.

1. The scientific principles underlying the process of developing primary school children's reading competence have been identified (linguistic, psychological, pedagogical, systemic, practical, motivational and cultural).
2. Characteristics of reading ability of primary school children have been developed.
3. It has been substantiated that work aimed at developing reading competence among primary school children should be carried out not only in native language lessons but also across other subjects and through extracurricular activities.

Theoretical significance of the research. The methodological complex developed to promote the reading competence of primary school children enriches the existing theoretical framework on the subject and serves as a factor enhancing the methodological effectiveness of educational materials designed for Armenia's elementary schools.

Practical significance of the research. By using the set of teaching methods we have developed, school children will acquire a basic level of reading skills.

Main points submitted for defense.

- the methods we have developed and tested, aimed at developing reading skills in primary school children, contribute to solving the above-mentioned problem;
- textbooks in the native language for primary schools in the Republic of Armenia contribute to the development of reading skills in primary school children;
- the "Marduk-Karduk" methodological complex developed and tested by us effectively contributes to the development of reading skills in primary school children;
- cognitive interest in primary school children contributes to the development of their reading skills;
- the basic principles we have developed for developing reading skills in primary school children with communication challenges (SCC), along with the methodological complex for their implementation, contribute to the development of these pupils' reading skills.

Approbation of the research results. The research was discussed and implemented within the scientific seminars of the Chair of the Armenian Language and its Teaching Methods named after A. Ter-Grigoryan at ASPU; at the international scientific conference dedicated to the 100th anniversary of ASPU; during a teachers' workshop at Yerevan Secondary School № 182; in the elementary grades of Yerevan Schools № 33, 39, and 162, Gyumri School № 7, and Noyemberyan School № 2 in Tavush region; as well as at the "Marduk-Karduk" Reading Competence Development Center operating at Yerevan Secondary School № 39 (by order of the RA Minister of Education, Science, Culture, and Sports № 1222-A/2, dated 26.07.2023).

The main provisions of the dissertation are published in 8 scientific works, 5 of which are single-authored.

Structure and volume of the dissertation. The dissertation consists of an introduction, three chapters, general conclusions, a list of references, and appendices. It includes 5 tables, 37 diagrams, and 6 appendices. The main text of the dissertation is 198 pages, with appendices it is 215 pages.

